## ՉՈԴ (ՀՆՈՒՄ՝ ՍՈԴՔ ԿԱՄ ՍՈԹՒՑ ԱՎԱՆ)

*Հնում եղել է մեծ բնակավայր-ավան, որն իր անունն է ավել ամբողջ գավառին: Գյուղը նշանակալից է եղել նաև որպես քարավանային ճանապարհներից մեկի վերջին հանգրվանը, որ այս գյուղից մտնում էր Ոմբոսյան ձորը և կտրելով լեռնանցքը իջնում Արցախ. Թարթառի հովիտը (ներկա Քյալբաջարի շրջան): Ոմբոսյան ձորում, լեռնանցքն սկսվելու վայրում, մինչև այժմ էլ մնում է մի հին քարավանատուն, որը նորոգվելով՝ օգտագործվում է որպես պահեստ: Քարավանատան պատերի ստորին, հին մասերը շինված են սրբատաշ ու մեծ քարերից և հնության մեծ վկաներ են:*

*Արձանագրություններ ունեցող հուշարձանները գյուղում հետևյալներն են.*

Ա. Եկեղեցի, *բազիլիկ ձևի, չորս մույթերի վրա, կանգուն է բազմաթիվ նորոգումների հետքերով, որոնց ընթացքում պատերի մեջ, որպես շինանյութ, օգտագործված են գերեզմանական հուշարձաններ: 1276 թ. գրված շինարարական արձանագրությունը (№ 1334) պիտի համարել կարևոր նորոգումների վերաբերող միայն, որովհետև պատերի ստորին մասերն իրենց ձևով և տեխնիկայով ավելի հին են:*

Բ. Գերեզմանատուն, *գտնվում է եկեղեցուց փոքր ինչ հեռու, դեպի արևմուտք. ընդարձակ է, բայց այժմ ավերված և քիչ գերեզմանաքարեր կան. որի արևելյան եզրին, ժայռաբեկորի վրա կանգնած խաչքարը հնագույնն է այստեղ և ունի 1274 թ. (№ 1345): Այս գերեզմանատան մեջ կանգնած են եղել չորս քառակող կոթողներ, գլխներին խաչեր (Տաթևի սյունի նմանությամբ), որոնցից երկուսը Լալայանը տեղափոխել է Թիֆլիս, մեկը Մեսրոպ Մովսեսյանը՝ Էջմիածնի վանք, իսկ մյուսը կորել է: Շահխաթունյանցը նշում է գյուղից դուրս երկու գմբեթավոր եկեղեցիներ, որոնք վաղուց գոյություն չունեն:*

*Մեր ժողովածուում ամփոփված են 24 արձանագրություններ, որոնցից 16-ը հնում հրատարակված են եղել:*

***1334. ԵԿԵՂԵՑՈՒ հարավային պատի արևմտյան մասում, մուտքին մոտ, երեսպատման երեք քարերի վրա, արտաքուստ, 10 տող.***





ԹՎ. ՉԻԵ (1276) Ի Թ|ԱԳԱՒՈՐՈՒԹԻ. ԱՊ|ԱՂԱՅՆ, ԿԱԹԱՂԻԿՈՍՈՒ|ԹԻ. ՏՐ. ՍՏԵՓԱՆՈՍԻ, ՊԱ|ՐՈՆՈՒԹԻ. ՀԱՍԱՆԱ| ԱՒԳՆԱԿԱՆՈՒԹԻ. ԱՄԵՒ|ՍԻՆ ԽԻՐՈ[Ւ] ՄԱՄԽԱՆԻՆ. ԵՍ ԱՆԱՐԺԱՆ ԱՌԱՔ|ԵԼ ՇԻՆԵՑԻ, ԶԵ-

ԿԵՂԵՑԻՍ ԻՇԱՏԱԿ. ԻՆՁ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ| ԻՄ ԵՒ ԶԱՒԱԿԱՑ ԻՄ [Ա]ԻԵ
. . . ՈՒՆԻՆ| ԳԵՐԳԱ, ԾՆՈՂԱՑ, ԵՂԲԱՐՑ . . . :

Ծանոթ. *Հրատարակիչների մոտ վերջին մեկ և կես տողերը թերի և աղճատված են։*

*Հրատ. Ջալալյանց, Բ, 112։ Սմբատյանց, 625։ Ալիշան, 74։ Լալայան, XIX, 25—26։*

Լուսանկ. 280

*1335. ԵԿԵՂԵՑՈՒ ներսում, հյուսիս-արևելյան ավանդատան բարավորի վրա 4 տող.*



ԱՆԱՐԺԱՆ ԱՌԱՔԵԼ, ԵՐԵՑ|, ԱՄՈՒՍԻՆ
ԶՄԼՔԱՆ, ԱՂՈՒԹԻՍ ԻՇԵՑԷՔ։

Ծանոթ. *Ենթադրում ենք, որ նույնն է նախորդ արձանագրության մեջ հիշատակված շինարար Առաքելի հետ. հետևաբար նաև նույն ժամանակի՝ XIII դար։*

*Հրատ. Սմբատյանց, 626 (թերի վերջից և ամուսնու անունն աղճատած)։*

*1336. ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան պատին, երեսպատման մի քարի վրա, բոլոր կողմերից թերի 4 տող.*



. . . ՀԱՅՈՑ ՀԱՄՏՈՒՆԱՑ . . |
. . . ԵՒ ՈՐԴՈՑ ԻՄՈՑ . . . . .
. . . ՆՀԱՄԲԱՐԵԼՈՆ
. . . ԱԾ ՈՂՈՐՄԻ . . . . . . . |

Ծանոթ. *Գրչության ոճով, ինչպես և Համտունի անվան ներկայությամբ, որը հատուկ էր միայն Բագաց Համտունյան իշխանական տան անդամներին, համարում ենք XII-XIII դարերի։*

Լուսանկ. 281

*1337. ԽԱՉՔԱՐ, մեծ, վեղարանդակ, ագուցված է եկեղեցու հարավային պատի մեջ՝ արտաքուստ, մուտքի արևմտյան կողմում. քիվին, շրջանակներին և թևերի շուրջը 5 տող.*



ԱԾ. ՈՂՈՐՄԻ ԹԷՈԴՈՐՈՍԻՆ.| ԿԱՄԱՒ Ա̅Յ ՄԵՔ ՏԷՐՈՒՆՍ, ԵՂԲԱՐՔՍ ԻՄ ՎԱՐԴԱՆՆ, ԷԳԱՏՍ, ԿԱ[Ն]Կ[Ն]ԵՑԱՔ ԽԱՉԵՐՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ: Թ̅Վ. ՋՂԶ: (1547):

Ծանոթ. Նույն ոճի մի խաչքար էլ ագուցված է նույն մուտքի արևելյան կողմում, բայց թե՛ քանդակները և թե՛ արձանագրությունը խիստ ջարդոտված։

Հրատ. Լալայան, XIX, 26։
Լուսանկ. 282

1338. ԽԱՉՔԱՐ, ագուցված է եկեղեցու արևմտյան պատի կենտրոնում՝ արտաքուստ. քիվին 2 տող.



ԱՃ. ՈՂՈՐՄԻ ՇԱՀՋԱՐԻՆ.|
ԹՎ. :ՋՂԹ: (1550):

Ծանոթ. ՇԱՀՋԱՐ անձնանունը գրված է պարզ. թերևս գրիչը անուշադրությամբ ՇԱՀՋԱՏ կամ ՇԱՀՆԱԶԱՐ անունն աղճատել է։

Հրատ. Լալայան, XIX, 26։
Լուսանկ. 283

1339. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, քիվը տաշած և տակից կոտրած, ագուցված է եկեղեցու արևմտյան պատի կենտրոնական մասում, կից նախորդին, խորանի գլխի շրջանակներին 1 տող.



ԹՎ. :Ռ: (1551) ՋՏՐ.
ԱՃՍ.ՏՈՒՐ....:

Ծանոթ. Կարելի է վերծանել նաև ԹՎ. :ՌՋ: և այլն։

Լուսանկ. 284

1340. ԽԱՉՔԱՐ, ագուցված է արևելյան պատի վերին մասում, կողքանց, խաչի թևերի շուրջը միայն թվականը՝ 1 տող.



ԹՎ. :Ռ: (1551):

Ծանոթ. Խաչքարի ստորին մասում երևում են մեկ տող արձանագրության հետքեր։

1341. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, տափակ, երեսին գավազան, գտնվում է եկեղեցու ներսում, հյուսիսային պատի տակ, երեսին 2 տող.



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՂՈՒԿԱՍ :Բ: ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԲ. ԳԱՆՁԱՍԱՐՈՒ:|
ԹՎ. :ՌՂԴ: (1645):

Հրատ. Սմբատյանց, 626 (թվականը ։Ռ։)։
Լալայան, XIX, 26 (թվականը ։ՌՂՁ։)։
Լուսանկ. 285

**1342. ԽԱՉՔԱՐ**, *ագուցված է եկեղեցու հարավային պատի արևմտյան ծայրին, կողքանց. տակի մասում 3 տող.*



ԽԱՉՍ ՏԷՐՈՒՆԱԿԱՆԻՆ. Ի :ԺԲ: (12) ՏԱՐԵԿԱՆ Ի ⌈ԿԵ⌉ԱՆ. ՓՈ⌈Ի⌉ԽԵՑԱՒ ՍՈՒԳ ԵՒ ՏԽՏՄՈՒ⌈ԹԻ⌉. ԵԹՈՂ ԾՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ։

*Ծանոթ. Համարում ենք XVI դարի, նկատի ունենալով քանդակների և գրչության ոճը, մանավանդ ԽԱՉ բառի ԽԱՉ գրությունը։*

Լուսանկ. 286

**1343. ԵԿԵՂԵՑՈՒ** *արևմտյան պատի ստորին, առաջին շարքի երեսպատման մի քարի վրա խիստ եղծված արձանագրության մնացորդ՝ 4 տող.*



. . . ԵՒ ԵՂԲԱՅՐ ԻՄ . . .

**1344. ԵԿԵՂԵՑՈՒ** *հարավային պատի արևմտյան մասում երեսպատման մի քարի վրա արձանագրության մնացորդ 1 տող.*



. . . ԾՆՈՂԱՑ ԱՄԷՆ . . .

*Ծանոթ. Արձանագրության վերջին բառերն են։*

**1345. ԽԱՉՔԱՐ**, *մեծ, կանգնած է ժամատեղիկի պատվանդանի վրա. գտնվում է եկեղեցուց հարավ՝ բլրակի գագաթին, թևերի արանքում և ստորին մասում 5 տող.*



ԹՎ. :ՉԻԳ: (1274)|, ԵՍ ԱԶԻԶՍ ԿԱՆԿ-ՆԵՑԻ| ԶԽԱՉՍ ԻՇԱՏԱԿ ԻՆՁ| ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄՈՅ.| ԱՂԱԻԹՍ ⌊ՅԻՇԵՑԷՔ⌋|

Հրատ. Լալայան, XIX. 25;
Լուսանկ. 287

**1346. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *դրված է եկեղեցուց արևմուտք՝ աղբյուրի ծորակի մոտ. երեսին 5 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ Ս⌊Ա⌋ՐԳ⌊Ի⌋ՍԻՆ,| ՈՐԴԻ Տ|Ր ԳԻՐԳՈՐ|ԻՆ. ԹՎ. :ՌԻ:(1571)։

**1347. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *ընկած է առվի ափին, գյուղի արևելյան եզրին, երեսին 3 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ| ՏԷՐ| ՅԱԿՈԲԻՆ.
ԹՎ. ՌՃԺ: (1661):

**1348. ԽԱՉՔԱՐ**, *մեծ, կանգնած է պատվանդանի վրա, եկեղեցուց արևմուտք, հին գերեզմանատան մեջ. Թիկունքին մեծ և անկանոն տառերով 6 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՄԵՆ|ԱԿԱԼԻՆ ԱՅ. ԵՍ
ՄԻՐ|ԱՆՇԷՍ ԿԱՆԳ|Ն|ԵՑԻ| ԽԱՉՍ
ԻՇԱ|ՏԱ|Կ ՀԱՒՐ ԻՄ| ԱՍՆԱՒՈՐԻՆ.
ԻՇԵՑԷՔ| Ի ՔՍ. ԹՎԻՆ ՌՃԼԳ: (1684):

*Հրատ. Լալայան, XIX, 27։*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՅԺՄ ՏԵՂՈՒՄ ՉԿԱՆ

**1349. ԽԱՉՔԱՐԻ** *թիկունքին, որը գտնվելիս է եղել գերեզմանատան մեջ.*

Հայոց թուին ՌԺԷ: (1568). փառաւորութեան Շահթամազին կանգնեցաւ խաչերս փրկութեան հոգւոյն Ուլուբէկին եւ իւր աւրհնեալ ննջեցելոցն՝ ձեռամբ պարոն տէր Գրիգորէս եպիսկոպոսին, եղբաւր որդի Մէլիք Աղաբէկին:

*Հրատ. Սմբատյանց, 625։ Լալայան, XIX, 27։*

**1350. ԽԱՉՔԱՐԻ** *թիկունքին, նախորդի մոտ.*

Շնորհօքն Աստուծոյ եւ Պետրոս վարդապետ, Գրիգոր եպիսկոպոս, Մելիք Միրզախանն, որդիք պարոն Մէլիքբէկին, թոռն Մէլիք Պաղասանին, կանգնեցաւ սուրբ խաչս փրկութեան հոգւոյ Ստեփաննոս աւրհնեալ եպիսկոպոսին՝ հօր եղբօր հաւրն մերոյ, ով ընթեռնոյք աղաւթս յիշեցէք, թվ. ՌՃԾ: (1701):

Ծանոթ. *Սմբատյանցի նկարագրությամբ այս երկու խաչքարերը կանգնած են եղել իրար կից, մեկ մեծ պատվանդանի վրա և դեռ իր ժամանակ (1895 թ. առաջ) պատվանդանի հետ միասին շուռ են եկել երեսի վրա։ Երկու արձանագրությունները էլ եղել են խաչքարերի թիկունքներին, իսկ երեսի մասերը մնացել են անհայտ։*

*Հրատ. Սմբատյանց, 625։ Լալայան, XIX, 27։*

**1351. ԿՈԹՈՂՆԵՐ**, *չորս հատ, քառակուսի, բարձր, ագուցված պատվանդանների մեջ. կանգնած են եղել գերեզմանատանը։ Լալայանը նրանք տեղափոխել է Թիֆլիսի Թանգարան, որոնցից մեկը ճանապարհին կոտրվել է.*

*Ա-ի վրա.*

Կամաւն Աստուծոյ եւ Յակոբս կանգնեցի զսբ խաչս բարեխաւս ծնողացն իմ Իպային եւ Անհային, թվ. ՌՁԷ: (1638):

Ծանոթ. *Առնում ենք Լալայանից, Սմբատյանցը չունի ԱՆՀԱՅ և թիվն էլ 1659 թ.։*

*Հրատ. Սմբատյանց, 622։ Լալայան, XIX, 26։*

*1352. Բ-ի վրա.*

Շնորհիւք Աստուծոյ ես Այտին Պօղոսանս, Դաւլաթ բէկս, Աստուածապաս ծա-ռայս Աստուծոյ կանգնեցուցաք սուրբ խաչս բարեխաւս ծնողաց մերոց Թամային և Փարին, Աղտանին, Մանգաբին. թվին ։ՌՃԲ։ (1653)։

*Հրատ. Սմբատյանց, 620։ Լալայան, XIX, 26։*

*1353. Գ-ի վրա.*

Յանուն աստուծոյ ես Աղախանս, ես Սալմօսս, ես Դաւլաթս որդի տէր Մելիք-սէթին կանգնեցուցաք սուրբ խաչս բարեխաւս տէր Մելիքսէթին, կողակցին Իլրումին, Պաշին, Դաստումին. թվ. ։ՌՃԲ։(1653)։

*Հրատ. Սմբատյանց, 620։ Լալայան, XIX, 27։*

*1354. Գ-ի վրա.*

Ես մեղապարտս, չարագործ Զաքարայս, կանգնեցի զխաչերս. ով կարդէք՝ մեզ ողորմած լերուք. եւ ծառաներուն իւրեանց Եփրոսիմին և Խալարինին։

*Հրատ. Սմբատյանց, 622։ Լալայան, XIX, 27։*

*1355. ԽԱՉՔԱՐԵՐ, երեք հատ, հենած են եղել եկեղեցու ներսում, հյուսի-սային պատին, Ղուկաս վարդապետի տապանաքարի մոտ.*

*Ա-ի վրա.*

Ա.Ծ. ողորմի տէր Սահակին։

*Հրատ. Սմբատյանց, 626։ Լալայան, XIX, 26։*

*1356. Բ-ի վրա.*

Ա.Ծ. ողորմի Ամիր Սուլթանին։

*Հրատ. Սմբատյանց, 626։ Լալայան, XIX, 26։*

*1357. Գ-ի վրա.*

Ա.Ծ. ողորմի Ոստակէսին։

*Հրատ. Սմբատյանց, 626, Լալայան, XIX, 26։*

## ՄԵԾ ՄԱԶՐԱ

*Գյուղի հին անունը անհայտ է, բայց հնագույն բնակավայր է. հատկապես նշանավոր էր* XVI—XVII *դարերում, երբ դարձավ Մելիք Շահնազարյանների նստոցը։ Տեղագիր հեղինակները հիշատակում են այստեղ մեծ քանակությամբ խաչքարերի գոյության մասին։ Սմբատյանցը հաշվել է 107 կանգուն խաչքար և հանձնել գյուղի սանուտերի հսկողությանը[1], բայց այժմ դրանց թիվը մեկ տասնյակից չի անցնում։ Ցավալի է, որ տեղագիր հեղինակները այդ բոլորից արտագրել են ընդամենը 11 արձանագրություն, մինչդեռ բոլոր ավերմունքներից հետո մեր հավաքածուն ունի 31։*

*Գյուղում մնացած հուշարձաններն ու արձանագրությունները խմբված են հետևյալ վայ-րերում.*

Ա. Հին գերեզմանատուն, *գտնվում է գյուղի հյուսիս-արևելյան եզրին. շատ ընդարձակ է, բայց ավերված. բարեբախտաբար մնացել է իր տեղում և կանգուն է 881 թ. նշանավոր խաչ-քարը։ Հնում սրա վրա շինված է եղել մատուռ, որ այժմ լրիվ քանդված է։ Այս գերեզմա-նատանը մնացել են քիչ քանակությամբ և աննշան գերեզմանական հուշարձաններ։*

Բ. Ավերակ եկեղեցի և շրջապատը. *գտնվում է գյուղի հարավային եզրին, գետակի ափի բարձրության վրա, եղել է մեծ, թաղածածկ շենք՝ շինված անտաշ քարերով. մնում են մոտ*

---

1 *«Գեղարքունիք», էջ 609։*